

«ԱԼՖԱՍԵ-ԸՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության

2022թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2022 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի ապահովումը:

Ընկերության պորտֆելում առկա միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորը վերջին տարիների ընթացքում ունեցել է նվազման տենդենց, իսկ վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը զուգահեռ ֆինանսական շուկայում գրանցվել է պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի բարձրացում, ինչն ուղղակիորեն ազդել է Ընկերության շահույթի վրա՝ մասնավորապես կտրուկ աճել են տոկոսային ծախսերը:

Ընկերությունը 2022 թ. վերջում համարել է իր կանոնադրական կապիտալը 100 մլն դրամով և 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 350.0 մլն դրամ:

Ընկերության ընդհանուր ակտիվները 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 8.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 7.8 մլրդ դրամ: Ընկերությունը 2022թ.-ին ներգրավել է հաճախորդների միջոցները՝ նրանց հետ կնքելով փոխառության պայմանագրեր:

2022 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների տարրերի կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել:

Իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը օգտագործում է կանոնադրական կապիտալը և գործընկեր ՀՀ բանկերից ներգրավված փոխառու միջոցները:

Հարկ է նշել, որ 2022թ. ընթացքում բանկերի կողմից տրամադրվող ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման պայմանները խստացրել են, ինչը պայմանավորված է բանկերի կողմից ստեղծված պայմաններում սեփական ռիսկերի կառավարման անհրաժեշտությամբ:

Ընկերության եկամուտների կառուցվածքի մեջ զգալի մաս են կազմում ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները: Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի մոտ 90%-ը դասակարգվել է որպես մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ: Ընկերության ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի այս կառուցվածքը թույլ է տալիս ունենալ կայուն եկամուտ և գերծ մնալ շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումներից առաջացած վնասից:

ՀՀ-ում իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության մասով առավել ակտիվ է ԿԲ քաղաքականությունը, որն առավելապես թիրախավորում է գնաճի զսպումը, իսկ դրամի կապիտալի ներհոսքի բացասական ազդեցությունների չեզոքացման ուղղությամբ նշանակալի քայլեր չեն ձեռնարկվում, քանի որ վերջինս «օգնում է» գնաճի զսպման նպատակին հասնելուն: 2021-2022 թթ. ընթացքում ֆինանսական շուկայում ստեղծված պայմաններում ֆինանսական գործիքների կիրառումը կարելի է համարել կտրուկ, ինչը բարձր ռիսկայնություն ստեղծեց ինչպես շուկայում գործող ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ՝ ներդրումային ընկերությունների համար: Նման պայմանները բարդացնում են Ընկերության կողմից գործարար ծրագրով կանխատեսված ցուցանիշների

ապահովումը, քանի որ վերջիններս հիմնված են արտաքին միջավայրից ազդեցությունների միտումների և դրանց նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կանխատեսվող զսպող քաղաքականության կանխատեսումների վրա:

Այսպիսով, 2022թ.-ի ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում Ընկերությունն արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրած նպատակները և պահպանել համեմատական կայունություն ժամանակաշրջանի համար:

2022 թվականի տարեսկզբին Ընկերությունը շարունակել է համագործակցել ֆիզիկական անձ ներդրողների հետ, որոնց հետ իրականացվել են ՀՀ պետական պարտատոմսերի առուվաճառքի և հակադարձ ռեպո գործարքներ:

Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերության գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշներից շեղումները հիմնականում պայմանավորված են տարվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքի կտրուկ աճով, ինչը կարծում ենք ՀՀ-ում ձևավորված սպասվածից բարձր գնաճի հետևանք է:

Գործադիր տնօրեն



Գ. Գրիգորյան